«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 154 04 01 2023թ.

ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումով հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2023թ. հաստիքացուցակը և դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերը՝

հրամայում եմ.

1.«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում ժամավճարային հիմունքներով աշխատող պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար 2023թ. հունվարից սահմանել ներքոնշյալ վարձատրման չափերը ըստ կոչումների և տարակարգերի՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը.

1.1.Դասախոսություն, գրախոսություն, ավարտական աշխատանքի, կրթական ծրագրի, մագիստրոսական թեզի ղեկավարում՝

Պաշտոն	1 ժամի արժեքը (ՀՀ դրամ)
պրոֆեսոր	5900 ՀՀ դրամ
դոցենտ	4600 ՀՀ դրամ
ասիստենտ, գ.թ.	4100 ՀՀ դրամ
ասիստենտ	3800 ՀՀ դրամ
դասախոս	3300 ՀՀ դրամ

1.2. Սեմինար, գործնական, լաբորատոր, ստուգարք, քննություն, ավարտական աշխատանքի պաշտպանություն, և պրակտիկայի ղեկավարում՝

Պաշտոն	1 ժամի արժեքը (ՀՀ դրամ)
պրոֆեսոր	4500 ՀՀ դրամ
դոցենտ	3500 ՀՀ դրամ
ասիստենտ, գ.թ.	3100 ՀՀ դրամ
ասիստենտ	2800 ՀՀ դրամ
դասախոս	2500 ՀՀ դրամ

2.Հանձնարարել մասնաճյուղի գլխավոր հաշվապահին՝ ժամավճարային հիմունքներով աշխատող պրոֆեսորադասախոսական անձնակազմի վարձատրությունը կատարել նախատեսված չափերով:
3.Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել Հաշվապահությանը:
4.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
5. Հրամանը ծանոթացնել մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ